

Վահան Թեքեյան. ազնվական քերթողը, կազմող, նախաբանի և հող-վածների հեղինակ՝ Արծրուն Ավագյան, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2018, 215 էջ

Միանգամայն համոզիչ ու աներկբայելի են ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արծրուն Ավագյանի խոսքերը. «Նա՝ հոգին խռովյալ ու դեմքը միշտ տխուր մարդը, հայ գրականության հավերժական ուղեկից Վահան Թեքեյանը, ում կյանքն ու գործը, թերևս, կարելի է բնութագրել հետևյալ բառերով՝ պայքար, անկում և սլացում: Ո՛չ կյանք, ո՛չ սեր, ո՛չ երջանկություն. այդ հենց նրա համար էր ասված: Եվ, այնուամենայնիվ, Թեքեյանը երջանիկ եղավ, երջանիկ, որ բանաստեղծ էր, ավելի ճիշտ՝ նա բանաստեղծ էր և հենց դրա համար երջանիկ եղավ» (էջ 59):

Հայ մշակույթի այս հսկան եղավ և մնաց հայոց պետականության ստեղծման ու պահպանման ամենամեծ ջատագովներից մեկը: Վկան՝ նրա ամբողջ կյանքն ու ստեղծագործությունը, ինչպես նաև խոստովանությունը.

«Դժոխք մեր կյանքը ըրինք՝ որ դուն դրախտ մը ըլլաս

Ով հայրենիք, անդունդին և երկնքին մեջ առկախ» (էջ 45):

Ա. Ավագյանի ուսումնասիրությունը մի շարք կողմերով նոր է ու շահեկանորեն տարբեր մինչ այժմ մեզ ծանոթ նմանատիպ աշխատանքներից: Նկատի ունեմ ամենից առաջ կառուցվածքը: Նա ընտրել է միանգամայն նոր, ըստ իս՝ առավել արդյունավետ և ազդեցիկ ճանապարհ՝ գիտականորեն բացահայտել ու հիմնավորել Թեքեյանի կյանքին ու ստեղծագործությանը վերաբերող յուրաքանչյուր փաստ՝ դրանք դիտելով իրենց մասնավոր դրսևորման և ազգային-հասարակական ու գրական-մշակութային համապատկերի մեջ:

Ա. Ավագյանը «Նախաբանի փոխաբեն» բաժնում նախ հիմնավորում է գրքի անհրաժեշտության գաղափարը այն անվիճարկելի փաստարկմամբ, ըստ որի՝ «Թեքեյանի մահվանից հետո թե՛ սփյուռքում և թե՛ մայր հայրենիքում տարբեր տարիներին տպագրվել են նրա մի շարք ժողովածուներ, ինչպես անտիպ, այնպես էլ տպագրված գործերից կազմվել գրքեր, որոնց մեջ հատկապես առանձնանում են «Գահիրեի Թեքեյան ֆոնտի յանձնախմբի» հրատարակած «Ամբողջական երկերի» վեցհատորյակը (նախատեսվում էր տասնհինգ հատոր): Վերջին տարիներին Ստամբուլում տպագրվեցին Թեքեյանի «Կեսարիա» (2016 թ.) և «Երկու դրախտները. ցանուցիր էջեր» (2017

թ.) վերնագրերով գրքերը: Այդուհանդերձ, եթե բացառենք 2012 թ. Երվանդ Ազատյանի կազմած «Վահան Թեքեան. Բանաստեղծություններու հատընտիր» ժողովածուն, վերջին տասնամյակներում ոչ միայն Թեքեյանի արձակից, այլև պոեզիայից որևէ գիրք չի տպագրվել մայր հայրենիքում» (էջ 10-11): Այս ծավալուն մեջբերումը ոչ միայն փաստում է, որ «ներկայացվող հատընտիրը սիրո ու գնահատանքի մի տուրք է մեծ բանաստեղծի ապրած կյանքին ու կատարած գործին՝ նրա ծննդյան 140-ամյակի առիթով» (էջ 11), այլև վկայում, որ վաղուց ժամանակն է նորովի և նոր ձևաչափով ներկայացնել հայ ընթերցողին «վսեմափայլ մարդուն ու ազնվական քերթողին» (էջ 12), ինչը, անտարակույս, հաջողվել է հմուտ գրականագետին:

Գրքին կցված ծավալուն հետազոտությունը, որ հեղինակը համեստորեն համարում է «Երեք հոդված», ուղղորդում է ընթերցողին ճշմարիտ, Վ. Թեքեյանին արժանի գեղագիտական մոտեցում դրսևորելու՝ նրա գեղարվեստին առնչվելիս: Ուզում եմ ասել, որ «Նախաբանի փոխարեն» հատվածում համառոտ, բայց սպառիչ ներկայացնելով Վ. Թեքեյանի ժառանգության՝ մինչ այժմ հրատարակման պատմությունը և փաստելով նոր հատընտիրի անհրաժեշտությունը՝ կազմողը նույնքան սպառիչ ու բազմակողմանիորեն բացահայտում է գրողի ստեղծագործության՝ նրա կյանքի վրա վճռական ազդեցություն ունեցած քիչ ծանոթ կամ գրեթե անծանոթ մի շարք դրվագներ ու մեկնաբանում դրանք:

Ա. Ավագյանը ընթերցողին համոզում է նաև այն անվիճարկելի ճշմարտությամբ, «որ մեծերը անսպառ են և միշտ էլ հնարավորություն են ընձեռում ուսումնասիրողներին՝ լրացումներ ու ընդլայնումներ կատարելու իրենց գործերի վերաբերյալ: Թեքեյանի պարագայում կա և այն իրողությունը, որ նրա կյանքն ու ստեղծագործությունները անչափ բազմաշերտ են, տարողունակ, անգամ՝ անընդգրկելի» (էջ 14): Այս փաստարկմամբ հասկանալի է դառնում և հիմնավորված «Կյանքի ուղիներում» ուսումնասիրության գետեղումը գրքի սկզբում: Թեքեյանի կյանքը ներկայացնելիս գրականագետը չի բավարարվել արդեն հայտնի ձևաչափի կանոնիկայով: Նրան ավելի շատ հետաքրքրել են գրողի՝ իբրև մարդու, հասարակական գործչի և գեղագետի ներաշխարհի բացահայտումները մի կողմից, մյուս կողմից՝ գրողի և միջավայրի մարդկանց միջև ձևավորված փոխհարաբերությունները՝ հակադրությունների և համադրությունների իրենց ամբողջ ծավալով:

Այս նպատակադրմամբ լիովին հասկանալի է դառնում այն մոտեցումը, որով Ա. Ավագյանը ներկայացնում է գրողի կյանքը, այն բաժանում երկու մեծ շրջափուլերի՝ «Պոլսից Պոլիս՝ 1878-1922» և «Կահիրեից Կահիրե՝ 1922-1945», որը լիովին արդարացված է: Հասկանալի են դառնում այն բեկումնային հանգուցակետերը, որոնք վճռական ազդեցություն են ունեցել գրողի ձևավորման գործում: Եվ, իսկապես, գլխապտույտ է առաջացնում Թեքեյանի թափառական կյանքի կարճ հանգրվանների պարզ ու ոչ ամբողջական թվարկումն անգամ՝ Պոլիս, Իզմիր, Լիվերպուլ, Մարսել, Կահիրե, Համբուրգ, Ալեքսանդ-

րիա, Թիֆլիս, Երևան, Էջմիածին, Երուսաղեմ, Նիկոզիա: Խոստովանենք՝ հեշտ գործ չէ այս անվերջանալի թվացող ցանկում գտնել և առանձնացնել այն հիմնական միջավայրերը, որոնք շրջադարձային են եղել գրողի կյանքում թե՛ ընկերային և թե՛ մանավանդ հոգեբանական առումներով:

Որդեգրած այս սկզբունքը Ա. Ավագյանին ոչ միայն հնարավորություն է ընձեռել ամբողջական և սպառիչ ներկայացնել Թեքեյան-երևույթի ձևավորման և կայացման ընթացքը, այլև արժևորել այն և ամրակայել այն տեղն ու դերը, որ իրավամբ պատկանում է նրան հայ գրականության անդաստանում: Ա. Ավագյանի հետազոտության կարևոր բաժիններից մեկը «Հայրենի եզերքի հայտնաբերման ուղիներում» հոդվածն է՝ նվիրված Թեքեյանի «Կեսարիա» օրագրությանը: Նա վստահ է, որ «Թեքեյանի «Կեսարիան» գեղարվեստական առումով չի գերազանցում գրողի մյուս արձակ գործերը», բայց նաև համոզված է, որ «հարյուր էջից մի փոքր ավելի այս գործում ականատեսի հավաստի վկայություններ են ներկայացվում ժամանակաշրջանի կեսարահայության կյանքի ճանաչողության առումով, որոշակի բացահայտումներ գրողի կենսագրության մանրամասներ և, շնորհիվ հեղինակի գրավիչ լեզվի, պատկերվող դեպքերի ու երևույթների ուշագրավության՝ այն կարդացվում է հետաքրքրությամբ» (էջ 63): Այս առումով համաձայն չեմ Ա. Ավագյանի այն պնդման հետ, թե Թեքեյանի «Կեսարիան» «բնականաբար հեռու է հայ դասական հուշագրության Եր. Օտյանի «Տասներկու տարի Պոլսեն դուրս», Կ. Չարյանի «Անցորդը եւ իր ճամբան», Վ. Շուշանյանի ու այլ հեղինակների ստեղծած համանման գրական արժեքներից» (էջ 63): Ավելին, համոզված եմ, որ Թեքեյանի այս գործը ամբողջականացնում է հայ օրագրական-հուշագրական գրականությունը, քանի որ հենց իր՝ Ա. Ավագյանի իրավացի գնահատանքով «Թեքեյանի այս գործը ամենից առաջ մի **վկայություն է**: Վկայություն հայության կյանքի բարդ մի շրջանի ու այն մարդկանց մասին, ովքեր եղեռնի հետևանքով այլևս անցյալ էին դարձել: ...Եվ հենց սա է, որ բարձրացնում է նրա արժեքը ու կարևոր է դարձնում մեզ համար ևս» (էջ 74):

Ես կարծում եմ, թե Ա. Ավագյանի հետազոտության առավել նորարարական հատվածը թե՛ քննաբանության և թե՛ Թեքեյան-մարդու բացահայտման նշանակությամբ «Վահան Թեքեյան – Լևոն Չավեն Սյուրմեյան. սերտ բարեկամություն և անդարձ բաժանում» հատվածն է, որը բացահայտում է Թեքեյանի՝ իբրև անխարդախ մարդու և նվիրյալի կերպարը մի կողմից՝ միաժամանակ ներկայացնելով նրա՝ արդեն «կէս մը մանուկի և կէս մը ծերի վիճակով» ապրող մարդու անհատնում թախծության պատճառներից ևս մեկը՝ հարազատ մարդուն կորցնելու դառնությունը: Սյուս կողմից՝ լույս է սփռում Թեքեյան-Սյուրմեյան՝ միշտ մշուշոտ և կեսբերան մեկնաբանված հարաբերությունների վրա, որոնք իրենց պարզության մեջ այնքան զարմանալիորեն շքեղ ու մարդկայնորեն ողբերգական են եղել, որ տեղիք են տվել նաև տգեղ ու գաղջ

բամբասանքների, ի մասնավորի՝ ոչ գրական կամ մերձգրական մարդկանց շրջանակներում:

Սյուրմեյանը մեր սփյուռքահայ գրականության վերջին և ազդեցիկ դասականներից է: Դասականը մեծություն է, բայց այլևս գաղտնիք չէ, որ նա առնվազն երախտագետ չգտնվեց Թեքեյանի հանդեպ, որը նրանց նամակագրության մեջ առկա բազմաթիվ վկայագրություններով փաստում է Ա. Ավագյանը: Հայտնի է, որ նրանց առաջին հանդիպումը տեղի է ունեցել 1919 թ., երբ Սյուրմեյանն ընդամենը 16 տարեկան էր, իսկ Թեքեյանն արդեն ծանրակշիռ ճանապարհ անցած, կյանքի դառնությունները ճաշակած, ընտանիք և զավակ չունեցող, բայց ունենալու անհագուրդ ցանկությունը սրտում ամբարած 43-ամյա տղամարդ: Տասներեք տարեկանում Եդեռնի գեհեռում ծնողներին կորցրած Սյուրմեյանը ևս ամբողջ խորքով ճաշակել էր որբության դառնությունը, և նրա մեջ առկա գրական հետաքրքրություններում որոշիչ էր նաև նրան վիճակված տխուր մանկության դերը: Դժվար է չհամաձայնել Ա. Ավագյանի հետ, թե՛ «այդ տխուր մանկությունը «ոչ այլևս» վերստին ապրելու բաղձանքը Սյուրմեյանի առաջին բանաստեղծություններում արտահայտվում է որպես վիճակ ու մտածում, իսկ Թեքեյանի պոեզիայում՝ որպես ընդհանրացնող ասելիք ու բողոք» (էջ 79): Հայտնի է նաև, որ Սյուրմեյանը իրեն բանաստեղծ չի համարել, չնայած «իրականում Սյուրմեյանը իրոք օժտված էր բանաստեղծական շնորհով, բանաստեղծ էր իր էությամբ ու տաղանդով, բայց բանաստեղծ չէր իր նախասիրություններով ու նպատակներով» (էջ 81): Թեքեյանի և Սյուրմեյանի շփումները կարճ տևեցին: 1922 թ. օգոստոսից Սյուրմեյանն արդեն Ամերիկայում էր՝ երկրագործի մասնագիտություն ստանալու և Հայաստանին ծառայելու իր նպատակների համար, բայց «զուտ ուժի եւ տգեղ ուժի երկաթե ու քարե զանգուած» այդ երկրում (Սյուրմեյանի բնութագիրն է) նա աստիճանաբար կորցնում է և՛ սրտի ջերմությունը, և՛ երախտագիտությունը, և՛ անգամ լեզուն: Հետևաբար, զարմանալի չի թվում, որ անտարբեր է դառնում նաև Թեքեյանի հանդեպ: Մինչդեռ Թեքեյանը Սյուրմեյանի համար դեռ նրա՝ Ամերիկա մեկնումի առաջին ամիսներին էր բացահայտել իր համակրանքի և սիրո դրդապատճառները, թե ցանկալի է՝ «օգտակար ըլլալ քեզի, քու մանկութիւնդ պաշտպանել, քու որբութիւնդ մեղմել, քու զրկանքդ ամոքել» (էջ 83): Ընդամենը սա է եղել այն ջերմության և նվիրումի ակունքը, որով Թեքեյանը վերաբերվել է Սյուրմեյանին իր կյանքի ամբողջ ընթացքում, երբ արդեն դադարել էր նրանց միջև ամեն տեսակի շփում, անգամ նամակագրություն: Այս հարաբերություններում Թեքեյանը այնքան բուռն է եղել ու ջերմ, որ շատերը նրա և Սյուրմեյանի միջև նկատել են անգամ արտաքին նմանություններ, այնքան, որ նույնիսկ արյունակից հայր և որդի են համարել, մանավանդ որ Սյուրմեյանն իր նամակները մակագրում էր «Հորս՝ Վահան Թեքեյանին» վերտառությամբ: Թեքեյանն ինքն է խոստովանում, որ Սյուրմեյանի արտաբերած «զավակդ» բառով «կարօտով տուայտեր եւ օրօրուել եմ միշտ, գիտնալով, որ

գրկաբաց կրնդունուիս՝ այն պատճառաւ, որ **չափազանց կը նմանիս սրտով, մտքով** ու կը խորհիմ հիմա – **կերպարանքով ա՛լ անո՛ր, իմ երազիս զաւակին»** (էջ 84):

Սյուրմեյան-Թեքեյան հարաբերություններին կամ դրանց ընդհատման պատճառներին ամենայն մանրամասնությամբ և սպառիչ մեկնաբանություններով անդրադարձել է Ա. Ավագյանը: Նշեմ միայն, որ նա շեշտում է, թե չի «կամեցել հետին թվով, տարիների հեռավորությունից ստանձնել դատավորի դեր և արդարացնել կամ մեղադրել ներկայացված կողմերից որևէ մեկին» (էջ 108): Համաձայնենք՝ դատավոր լինել հարկավոր չէ, բայց մի թե ավելորդ է հասկանալ պատճառներն ու, ինչո՞ւ ոչ, նաև բաժանման առթողին:

Պատճառները փորձել է վեր հանել Ա. Ավագյանը: Դրանցից մեկը նա համարում է Սյուրմեյանի ապրած դառը կյանքը և Ամերիկայում կրած գրկանքները, դրանցից ծնված սառնությունը, որ «կարող էր մղել ոչ միայն գրականության նկատմամբ աճող անտարբերության, ... այլև առհասարակ գրելու, այդ թվում նաև նամակներ գրելու ցանկության պակասի» (էջ 92): Սյուս պատճառը նա համարում է Խորհրդային Հայաստանում «քաղաքական ու ազգային սահմանափակումների» առկայությունը և նրանց՝ Հայաստան այցելելու անհնարինությունը, մանավանդ որ «Հայաստանը չէր կարող Թեքեյանի և մանավանդ Սյուրմեյանի իղեալը լինել» (էջ 92):

Երրորդ պատճառ կարող էր լինել Սյուրմեյանի ամերիկյան դաստիարակությունը, նրա «միստր»-ացումը, կամ, ասենք, Հայ կրթական հիմնադրամի կողմից կրթաթոշակի դադարեցումը: Այս և մյուս բոլոր փաստերը կարող էին պատճառ լինել: Բայց արդյոք Թեքեյանն ավելի լավ վիճակում է եղել թե՛ հոգեբանական և թե՛ մանավանդ սոցիալական առումով, քան Սյուրմեյանը: Հաստատ՝ ո՛չ (և սա այն դեպքում, որ Թեքեյանը չի զլացել դրամական օգնություն ցուցաբերել Սյուրմեյանին): Խնդիրը զուտ մարդկային նկարագրի մեջ է: Սյուրմեյանը խոստովանել է, որ Թեքեյանին իր գրած նոր բանաստեղծություններից է ուղարկել **«պարզապես զինք հաճոյացնելու համար»** (էջ 94): Կարծում եմ՝ Սյուրմեյանը դեռ չէր ըմբռնել Թեքեյանի մեծության չափը և մարդկային նկարագրով զիջում էր նրան: Դժվար ու դառն է խոստովանելը, բայց նաև փաստենք, որ սա է բուն իրականությունը: Այս դեպքում դժվար է չհամաձայնել Ա. Ավագյանի հետ, թե՛ «Թեքեյանին մնացին նաև Սյուրմեյանի հասցրած **բաժանման ցավն ու վիրավորանքը**: Սա է բուն ճշմարտությունը: Ճշմարտություն, որը շատ տխուր է» (էջ 107):

Ա. Ավագյանը գրքի «Հատընտիր» բաժնում ընդգրկել է Թեքեյանի վաթսուներեք բանաստեղծություն՝ առաջնորդվելով 1933 թ. նրա գրական գործունեության փարիզյան հանձնախմբի որդեգրած սկզբունքով: Այն ժամանակ հանձնախումբը գրքում ընդգրկել է 33 բանաստեղծություն՝ նկատի ունենալով տպագրության տարեթիվը: Ա. Ավագյանը նույնպես պատճառաբանում է իր նախընտրած թիվը. «Առաջարկվող գրքում մենք ընթերցողին ենք ներկայացնում նախորդից կրկնակի թվով ավելի բանաստեղծություններ (որոնց

ավելացնելով ևս մեկը՝ այն հավասարեցրել ենք Թեքեյանի ապրած տարիներին՝ 67), որոնք շատ ավելի ընդգրկուն են արտահայտում բանաստեղծական այն թևածումները, որոնք բնութագրական են Թեքեյան արվեստագետին ու մարդուն» (էջ 10): Ավելացնենք՝ տպագրված բանաստեղծությունները նաև տեսանելի են դարձնում Ա. Ավագյանի հետազոտական խոսքի հիմնավորվածությունը, այն առավել տպավորիչ դարձնում: Նա միանգամայն ճիշտ է վարվել, երբ գիրքն ամբողջացրել է «Բնութագիր և գնահատանք» բաժնով: Թեքեյանի ժամանակակիցների և հետնորդների կարծիք-բնութագրերը ոչ միայն լիարժեք պատկերացում են տալիս մեր մշակույթի պատմության մեջ նրա գրական ժառանգության տեղի և դերի մասին, այլև առավել ամբողջական են դարձնում մեզ առաջարկվող գիրքը, որ, հիրավի, արժեքավոր ներդրում է թեքեյանագիտության մեջ:

Ամփոփելով՝ նշեմ, որ ինչպես ամեն գործում, որ գրված է անկեղծ, «սրտի յուրաքանչյուր նյարդով», այստեղ ևս առկա են մի քանի անհաջող ձևակերպումներ: Այսպես, ինչպես նշում է Ա. Ավագյանը՝ «Միամանթոյի, Վարուժանի, Ռ. Սևակի և արևմտահայ այլ բանաստեղծների գործերը մայր հայրենիքում իրավացիորեն տպագրվել են արևմտահայերենով, մինչդեռ Թեքեյանինը՝ հաճախ արևելահայերենով» (էջ 12): Կարծում եմ, որ այստեղ նկատի է առնվում ոչ թե լեզվաճյուղը, այլ ուղղագրությունը: Կամ՝ «գրելու համար չունենալով տարրական պայմաններ՝ ապրելու հոգսը նրան շատ հաճախ է այլ աշխատանքների տարել» (էջ 44). միտքը խճողված է, և թվում է, թե «ապրելու հոգսն» է ենթական:

Բարեբախտաբար նման ձևակերպումները չափազանց քիչ են և չեն ստվերում գիրքը, որը, հիրավի, ճանաչողական մեծ արժեք ունի՝ լույս ընծայված ճիշտ ժամանակին և ճիշտ տեղում՝ մայր հայրենիքում: Այն արժանի տուրք է Ազնվական քերթողին:

ՄԵՆԺԻԿ ՄՐԱՊԻՈՆՅԱՆ

Ներկայացվել է 06.12.2018

Ընդունվել է տպագրության 21.02.2019